ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՏԱՆ-ԴՄ-2024/05-06
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 18 դեկտեմբեր, 2024թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Դավիթ Գասպարյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՊՈՊՈՒՏԻ. ԷՅ ԷՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Աստղիկ Մաիլյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 01.03.2024թ. ««11009 Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 366-Ա և 17.12.2024թ «Մրցութային հանձնաժողովի որոշումը հաստատելու և դրամաշնորհի պայմանագրի նախագիծ ներկայացնելու մասին» թիվ 2478-Ա հրամանը, «Նորարարական օնլայն ավտոկայան» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) դրականացումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5-րդ կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 10,000,000 (տասը միլիոն) (ներառյալ հարկերը) ՀՀ դրամ՝ որպես կանխավճար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով, ընդ որում՝ Ընկերությանը հատկացված կանխավճարի գումարի 25 (քսանհինգ) տոկոսը սառեցվում է բանկի կողմից՝ սպասարկման պայմանների վերաբերյալ եռակողմ Համաձայնագրի համաձայն:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը պայմանագրի 5-րդ կետում սահմանված կարգով և ժամկետներում.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 մասնակցություն ցուցաբերել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից «Մուտք դեպի շուկա» դրամաշնորհային մրցույթի հաղթող ընկերությունների համար նախատեսված և իրականացվող աքսելերացիոն բնույթի կրթական դասընթացներին:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան և առանձնացված հաշվառում:

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաբաժիններով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով նախարարություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե և հատուցել կողմի պատճառած վնասները՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.9 Դրամաշնորհի շրջանակներում ստացված դրամական միջոցները բաշխել առանձնացված բանկային հաշվի (հաշվեհամարի) միջոցով:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը

տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախարարությունը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը՝ 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամը, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կազմակերպության հաշվեհամարին պայմանագրի 1.1 կետով ամրագրված գումարի փոխանցումից հետո գումարի 25 (քսանհինգ) տոկոսը, որը կազմում է 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, սառեցվում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից՝ համաձայն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, կազմակերպության և բանկի միջև կնքվելիք հաշվի սպասարկման պայմանների վերաբերյալ եռակողմ համաձայնագրի՝ (այսուհետ՝ Համաձայնագիր): Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտերի հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

5.2 Սառեցված 25 (քսանհինգ) տոկոսը ենթակա է ապասառեցման միայն այն դեպքում, երբ նախարարությունը, պայմանագրի արդյունքն ընդունելուց հետո, այդ մասին գրավոր համաձայնություն է տալիս բանկին: Պայմանագրի արդյունքի ընդունումից հետո ապասառեցումը իրականացվում է մինչև 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրում ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5 Նախարարության կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ www.hti.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն	**Կազմակերպություն**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՁՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀԿՀՀ 02565518	«ՊՈՊՈՒՏԻ, ԷՅ ԷՄ» ՍՊԸ ք. Երևան, Ռուբինյանց փողոց 21/3 շենք, բն. 1 ք. Երևան, Մաշտոցի պողոտա 18 շենք, բն. 15 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570029136951300 ՀԿՀՀ 01061832
Գլխավոր բարտուղար՝ Դավիթ Հասանյան (ստորագրություն)	Տնօրեն՝ Աստղիկ Մաիլյան (ստորագրություն)

Հավելված 1
2024թ. դեկտեմբերի 18-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/05-06 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN Ը/Կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (<< դրամ)
1.	Տեխնիկական վերազինում	Այս փուլում նախատեսվում է իրականացնել POPUTI հավելվածում (ios և android օպերացիոն համակարգերում) ֆունկցիոնալ նոր հնարավորությունների ավելացում, www.poputi.am կայքի գործարկում, ինչպես նաև շարունակական թարմացումների, անխափան աշխատանքի ապահովում:	1. Ֆունկցիոնալ գործիքների ներդնում և կառավարման վահանակի ստեղծում կազմակերպությունների համար: 2. Telcell վճարային նոր համակարգի ինտեգրում: 3. Վերկայքի գործարկում 4.API ինտեգրումներ (push ծանուցումներ, քարտեզի API-ներ, և այլն) 5. Օնլայն օգնության և FAQ էջի ստեղծում 6. Idram վճարային համակարգի ինտեգրում 7. Հավելվածի շարունակական թարմացումներ, տեխնիկական խնդիրների բացառում	1.Արդյունքը՝ Կազմակերպությունների համար գործում է անհատական, տեխնիկապես անթերի աշխատող ֆունկցիոնալ կառավարման վահանակ, որը հնարավորություն է տալիս նրանց ընդունել առցանց ամրագրումներ, ինչպես նաև ղեկավարել իրենց երթերը, մեքենաները և վարորդներին: Գնահատման չափանիշ՝ Պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ SS կազմակերպության կամ անհատի հետ, վճարման անդորրագիր (առկայության դեպքում նաև հաշիվ-ապրանքագիր), հղումներ/նկարներ կազմակերպությունների կառավարման վահանակից: 2. Արդյունքը՝ Հավելվածում և վեբկայքում ինտեգրված Telcell վճարային համակարգը հնարավորություն կտա օգտատերերին կատարել այս վճարային համակարգով ապահով օնլայն վճարումներ: Գնահատման չափանիշ՝ Պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ SS կազմակերպության կամ անհատի հետ, վճարման անդորրագիր (առկայության դեպքում նաև հաշիվ-ապրանքագիր), պայմանագիր Telcell-ի հետ: 3. Արդյունքը՝ www.poputi.am կայքի գործարկումը էլ ավելի կընդլայնի օգտատերերի շրջանակը և հնարավորություն կտա կայքի միջոցով օգտատերերին տեղեկացնել ընթացիկ ակցիաների և թուփ երթուղիների մասին:	31.05.2025	13.06.2025	3,500,000

				Գնահատման չափանիշ՝ Պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ SS կազմակերպության կամ անհատի հետ, փոխանցման քաղվածք բանկից (առկայության դեպքում նաև հաշիվ-ապրանքագիր), հրումներ կայքէջից ։ 4. Արդյունքը՝ Հավելվածում ինտեգրված բստh ծանուցումները թույլ կտան օգտատերերին՝ բաց չթողնել կարևոր ծանուցումները: Ներկայումս հավելվածում կիրառվող բարտեզի API-ների փոխարինումը նոր, ավելի ճկուն տարբերակով կարող է զգալիորեն բարձրացնել հավելվածի ֆունկցիոնալությունը, օգտատերերի փորձը և ընդհանուր արդյունավետությունը: Գնահատման չափանիշ՝ Պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ SS կազմակերպության կամ անհատի հետ, փոխանցման վճարման անդորրագիր (առկայության դեպքում նաև հաշիվ-ապրանքագիր), նկարներ հավելվածից/վեբկայքից: 5. Արդյունքը՝ 24/7 օնլայն օգնության և FAQ բաժիններոy կարող են զգալիորեն բարելավել ծառայությունների որակը, օգտատերերի բավարարվածությունը և բիզնեսի արդյունավետությունը: Գնահատման չափանիշ՝ Պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ SS կազմակերպության կամ անհատի հետ, վճարմա անդորրագիր (առկայության դեպքում նաև հաշիվ-ապրանքագիր), նկարներ հավելվածից/վեբկայքից: 6. Արդյունքը՝ Հավելվածում և վեբկայքում ինտեգրված Idram վճարային համակարգը հնարավորություն կտա օգտատերերին ունենալ այլընտրանք և կատարել այս վճարային համակարգով ապահով օնլայն վճարումներ: Գնահատման չափանիշ՝ Պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ SS կազմակերպության կամ անհատի հետ, փոխանցման քաղվածք բանկից (առկայության դեպքում նաև հաշիվ-ապրանքագիր), պայմանագիր Idram-ի հետ:			

				7. Արդյունքը՝ Հավելվածի և վերկայքի անխափան աշխատանքը ապահովում են արդյունավետ և որակյալ ծառայություն, ինչը կարևոր դեր ունի ինչպես օգտատերերի բավարարվածության, այնպես էլ բիզնեսի հաջողության համար: Գնահատման չափանիշ՝ Պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ SS կազմակերպության կամ անհատի հետ, վճարման անդորրագիր (առկայության դեպքում նաև հաշիվ-ապրանքագիր):			
2.	Մարքեթինգային միջոցառումներ	Այս փուլում նախատեսվում է նկարահանել մեկ գովազդային հոլովակ, ինչպես նաև իրականացնել մարքեթինգային արշավներ սոցիալական մեդիայի հարթակներում (Facebook, Instagram):	1. Մեկ պրոֆեսիոնալ գովազդային հոլովակի նկարահանում 2. POPUTI-ի համար սոցիալական մեդիա մարքեթինգի իրականացում Facabook և Instagram հարթակներում: Գովազդային փոքր արշավների նկարահանում 3. Գովազդային տարբեր նյութերի տպագրություն:	1. Արդյունքը՝ Գովազդային պրոֆեսիոնալ հոլովակը Poputi հավելվածի համար կարող է դառնալ շատ ազդեցիկ գործիք՝ կիրառելի տարբեր նպատակներով: Այն կնպաստի բրենդի ճանաչելիության բարձրացմանը, նոր օգտատերերի ներգրավմանը և մեր դիրքի ամրապնդմանը շուկայում: Գնահատման չափանիշ՝ Պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, վճարման անդորրագիր (առկայության դեպքում նաև հաշիվ-ապրանքագիր), վիդեոհոլովակ: 2. Արդյունքը՝ Սոցիալական մեդիայի հարթակներում POPUTI-ի ակտիվ ներգրավվածությունը մեծ ազդեցություն կարող է ունենալ հավելվածի ճանաչելիության, օգտատերերի ներգրավման և բիզնեսի աճի վրա: Մասնավորապես, այն կնպաստի նոր օգտատերերի ներգրավմանը, բրենդի ճանաչելիության բարձրացմանը, վստահության ձևավորմանը: Գնահատման չափանիշ՝ Պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, փոխանցման թղթածք բանկից (առկայության դեպքում նաև հաշիվ-ապրանքագիր), ամսական մեդիա պլան, հղումներ: 3. Տպագրված տարբեր նյութերը մեծ ազդեցություն կունենան **Poputi-ի** ճանաչելիության, բիզնեսի զարգացման և օգտատերերի ներգրավման վրա: Գնահատման չափանիշ՝ Պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, փոխանցման թղթածք բանկից (առկայության դեպքում նաև հաշիվ-	31.05.2025	13.06.2025	3,150,000

				ապրանքագիր), տպագրված նյութեր:			
3.	Զանգերի կենտրոնի իզորացում	Այս փուլում նախատեսվում է ձեռք բերել նոր տեխնիկա զանգերի կենտրոնի համար, ինչպես նաև ներգրավել 3 նոր աշխատակցի:	1. 3 նոր հաճախորդի ձեռք բերում 2. 1 բազմաֆունկցիոնալ սարքի ձեռք բերում 3. 3 աշխատակիցների ներգրավում զանգերի կենտրոնում:	1. Արդյունքը՝ Տեխնիկական վերազինումը կապահովի բարելավել ծառայությունների որակը, արդյունավետությունը և հաճախորդների բավարարվածությունը: Գնահատման չափանիշ՝ Ձեռք բերման հաշիվ-ապրանքագիր, վճարման անդորրագիր, այլ փաստաթղթեր համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի: 2. Արդյունքը՝ Տեխնիկական վերազինումը կապահովի բարելավել ծառայությունների որակը, արդյունավետությունը և հաճախորդների բավարարվածությունը: Գնահատման չափանիշ՝ Ձեռք բերման հաշիվ-ապրանքագիր, վճարման անդորրագիր, այլ փաստաթղթեր համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի: 3. Արդյունքը՝ Զանգերի կենտրոնի անխափան աշխատանքը կարող է զգալի դեր ունենալ հավելվածի արդյունավետության և օգտատերերի բավարարվածության վրա: Գնահատման չափանիշ՝ Պայմանագրեր, աշխատավարձերի վճարման անդորրագրեր և այլն:	31.05.2025	13.06.2025	3,350,000
	Ընդամենը՝ 10,000,000 ՀՀ դրամ						

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039[illegible]
ՀՎՀՀ 02565518

Գլխավոր քարտուղար՝ Տիգրան Գևորգյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«ՊՈՊՈՒՏԻ, ԷՅ ԷՄ» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փողոց 21/3 շենք, բն. 1
ք. Երևան, Մաշտոցի պողոտա 18 շենք, բն. 15
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570029136951300
ՀՎՀՀ 01061832

Տնօրեն՝ Ասլանի Մաիլյան

(ստորագրություն)

Հավելված 2
2024թ. դեկտեմբերի 18-ին
կնքված N ԲՏԱՆ-2024/05-06 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողություններ՝ հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել ովյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Կազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518	«ՊՈՊՈՒՏԻ, Է3 Է,Մ» ՍՊԸ ք. Երևան, Ռուբինյանց փողոց 21/3 շենք, բն. 1 ք. Երևան, Մաշտոցի պողոտա 18 շենք, բն. 15 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570029136951300 ՀՎՀՀ 01061832
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	Տնօրեն՝ Աստղիկ Մաիլյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 3
2024թ. դեկտեմբերի 18-ին
կնքված N ԲՏԱՆ-2024/05-06 պայմանագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Միջոցառման													
հրավերով նախատեսված չափաքաժնի համարը	Արցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	99999999	Դրամաշնորհային ծրագիր												10,000,000	

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՏԵՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀԿՀՀ 02565518

Գլխավոր բարտուղար՝ Լուսինե Կարապետյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«ՊՈՊՊՈՒՏԻ, ԷՅ ԷՄ» ՍՊԸ
ք. Երևան, Ռոբինյանց փողոց 21/3 շենք., բն. 1
ք. Երևան, Մաշտոցի պողոտա 18 շենք., բն. 15
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570029136951300
ՀԿՀՀ 01061832

Տնօրեն՝ Սպրդիկ Մաթիլյան

(ստորագրություն)

Հավելված 4
2024թ. դեկտեմբերի 18-ին
կնքված N ԲՏԱՆ-2024/05-0Є պայմանագրի

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518	«ՊՈՊՈՒՏԻ, ԷՅ ԷՄ» ՍՊԸ ք. Երևան, Ռուբինյանց փողոց 21/3 շենք, բն. 1 ք. Երևան, Մաշտոցի պողոտա 18 շենք, բն. 15 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570029136951300 ՀՎՀՀ 01061832
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	Տնօրեն՝ Ատոդիկ Սաիլյան
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝_____
Նախարարությունը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված —— հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	Արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	Փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 5
2024թ. դեկտեմբերի 18-ին
կնքված N ԲՏԱՆ-2024/05-06 պայմանագրի

ԴՐԱՍԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի անվանումը՝ Նորարարական օնլայն ավտոկայան

Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի) 01.01.25 - 31.05.25

Ծրագրի նկարագրություն՝

POPUTI-ն առցանց հարթակ է, որը նորարարական տեխնոլոգիաների կիրառման միջոցով միտված է լուծելու Հայաստանում տրանսպորտի ոլորտում առաջացած մի շարք մարտահրավերներ և խնդիրներ: Այն Հայաստանում միակ հարթակն է, որտեղ կիրառվում է երթերի համօգտագործման սկզբունքը (ride-sharing), և որը կապում է վարորդներին և ուղևորներին՝ թույլ տալով կիսել ուղևորությունների ծախսերը և ապահովել Հայաստանում էկոլոգիապես ավելի մաքուր և արդյունավետ տրանսպորտային ծառայություններ:

Հինգ ամիս տևողությամբ <<Նորարարական օնլայն ավտոկայան>> ծրագրի շրջանակներում POPUTI-ն նպատակ ունի ընդլայնելու իր օգտատերերի քանակը, ներգրավելու Բիզնեսների (ներառյալ պետական լիցենզիա ունեցող կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող և ոչ կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների) և դառնալու Հայաստանում առաջին **օնլայն ավտոկայանը**: Սա կլուծի ՀՀ տրանսպորտի ոլորտում առկա մի շարք խնդիրներ, մասնավորապես, ավտոկայաններին կտրամադրի օնլայն ամրագրման համակարգ, կբարելավի ուղևորների՝ միջմարզային երթերի օնլայն ամրագրման փորձառությունը, կնպաստի օդի աղտոտվածության նվազեցմանը և կթեթևացնի միջմարզային տրանսպորտի ծանրաբեռնվածությունը, հասանելի կդարձնի այնպիսի երթեր, որոնք չկան պետական երթուղիներում, ինչպես նաև կդառնա անհատ վարորդների և փոքր ուղևորափոխադրում իրականացնող կազմակերպությունների համար այն հարթակը, որը կապահովի վերջիններիս համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: POPUTI-ն, որպես նորարարական հարթակ, նախատեսված է լուծելու ոչ միայն առկա խնդիրները, այլև ապահովելու երկարաժամկետ ազդեցություն, շարունակելիություն և կայունություն: Հարթակի զարգացման մեջ ներդրված են լինելու մի շարք մեխանիզմներ, որոնց շնորհիվ այն կդառնա թափանցիկ, պետության կողմից վերահսկելի և կնվազեցնի տնտեսավարողների կողմից ստվերային գործունեությունը:

«Նորարարական օնլայն ավտոկայան» ծրագրի սպառողներն են հանդիսանում ուղևորները, վարորդները և տրանսպորտային կազմակերպությունները, իսկ սպառողների սեգմենտները բավականին բազմազան են՝ ներառելով տարբեր խմբերի օգտատերեր, որոնք ունեն տարբեր կարիքներ և նպատակներ:

POPUTI-ն մուտք է գործել շուկա 6 ամիս առաջ և հիմնականում նպատակաուղղված է Հայաստանի միջքաղաքային տրանսպորտային ծառայությունների շուկային, որը ներառում է ինչպես անհատական տրանսպորտային ծառայություններ մատուցող վարորդներին, այնպես էլ ավտոկայաններին և փոքր ու միջին տրանսպորտային ընկերություններին, որոնք իրականացնում են միջմարզային և միջքաղաքային ուղևորափոխադրումներ: <<Նորարարական օնլայն ավտոկայան>> ծրագրի շրջանակներում POPUTI-ն նպատակ ունի ամրապնդելու և ընդլայնելու իր դիրքերը շուկայում, ինչպես նաև դառնալու առաջին օնլայն, թվային ավտոկայանը:

POPUTI հավելվածում ներդրված նորարարական լուծումները համատեղ ստեղծում են մի հարթակ, որը խնայում է ժամանակը, նվազեցնում է սխալները և ապահովում է բարձր մակարդակի հաճախորդների փորձառություն: Նորարարական մոտեցումների համադրությունը POPUTI-ն դարձնում է առաջատար լուծում միջքաղաքային տրանսպորտային ոլորտում, առաջարկելով այնպիսի գործիքներ և հնարավորություններ, որոնք մինչ այժմ հասանելի չէին շուկայում:

Նախարարություն	**Կազմակերպություն**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«ՊՈՊՈՒՏԻ. Է.Յ Է.Մ» ՍՊԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10,	ք. Երևան, Ռուբինյանց փողոց 21/3 շենք. հն. 1
ՏՆ գործառնական վարչություն	ք. Երևան, Մաշտոցի պողոտա 18 շենք. բն. 15
ՀՎՀՀ 90001103[illegible]	«Ամերիաբանկ» ԲԲԸ
ՀԿՀՀ 0256[illegible]	ՀՎՀՀ 15[illegible]0291365951300
Գլխավոր բաշխիչ՝ Դավիթ Ղազարյան	ՀԿՀՀ [illegible]01061832
	Տնօրեն Նարեկ Ավագյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

ԷՍՔՐՈՈՒ ՀԱՇՎՈՎ ԳՈՐԾԱՐՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ E19122024/Շ6

ք. Երևան «20» դեկտեմբերի 2024թ.

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.09.1992թ. որոշմամբ, գրանցման համար 50, վկայական թիվ 0154, հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 2), այսուհետ՝ **«Բանկ»**, ի դեմս Բանկի անունից հանդես եկող իրավասու անձի, մի կողմից,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս գլխավոր քարտուղար Դավիթ Գասպարյանի, ով գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, և

«ՊՈՊՈՒՏԻ. ԷՅ ԷՄ» ՍՊԸ -ն (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց փողոց 21/3 շենք, բն. 1, այսուհետ՝ «Կատարող») ի դեմս գործադիր մարմնի ղեկավար Աստղիկ Մաիլյանի, ով գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

այսուհետ՝ բոլորը միասին՝ «Կողմեր», իսկ առանձին կիրառվելու դեպքում՝ «Կողմ», կնքեցին սույն Էսքրոու հաշվով գործարքի իրականացման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրի ստորագրմամբ Կողմերն արձանագրում են, որ

1.1.1. Պատվիրատուն և Կատարողը 18.12.2024թ. կնքել են Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին թիվ ԲՏԱՆ-ԴՄ-2024/05-06 ավիրաբերության պայմանագիրը (այսուհետ՝ Դրամաշնորհային պայմանագիր), ընդ որում Բանկը Դրամաշնորհային պայմանագրի կողմ չի հանդիսանում:

1.1.2. Պատվիրատուն և Կատարողը համաձայնում են Բանկին նշանակել որպես Էսքրոու գործակալ՝ համաձայն ՀՀ օրենսդրության և սույն պայմանագրով սահմանված պայմանների:

1.1.3. Բանկը համաձայնում է գործել որպես Էսքրոու գործակալ Պատվիրատուի և Կատարողի համար:

2. Էսքրոու հաշվի բացում և փակում

2.1. Սույն պայմանագրով սահմանված կարգով, Բանկը պարտավորվում է Պատվիրատուի և Կատարողի միջև Դրամաշնորհային պայմանագրով հաշվարկների իրականացման նպատակով սույն Պայմանագիրը Կողմերի միջև կնքվելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողի անունով Բանկում բացել եստուն բանկային հաշիվ (այսուհետ՝ «Էսքրոու հաշիվ») համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի՝ հետևյալ տվյալներով.

Հ/Հ թիվ 1570043106438500

2.2. Սույն Պայմանագիրը կնքելու պահից 10 /տասը/ օրացույցային օրվա ընթացքում Պատվիրատուն անկանխիկ եղանակով Էսքրոու հաշվին մուտքագրում է 10,000,000.00 /տասը միլիոն/ ՀՀ դրամ (այսուհետ՝ «Դրամաշնորհի գումար»)՝ որպես Դրամաշնորհային պայմանագրով Պատվիրատուի կողմից Կատարողին վճարման ենթակա գումար, որից՝ 2,500,000.00 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամը (այսուհետ՝ «Էսքրոու գումար») կպահվի Էսքրոու հաշվին և կբաշխվի սույն Պայմանագրով սահմանված կարգով, իսկ մնացած 7,500,000.00 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամի գծով Կողմերը սույնով պայմանավորվում են, և Պատվիրատուն սույնով տալիս է իր համաձայնությունն ու հանձնարարությունը, որ Դրամաշնորհի գումարը ամբողջությամբ մուտք լինելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Դրամաշնորհի գումարի և Էսքրոու գումարի այդ տարբերությունը փոխանցվի Կատարողի՝ Բանկում գործող թիվ 1570029136951300 հաշվեհամարին: Դրամաշնորհի գումարն Էսքրոու հաշվին մուտք լինելու մասին Բանկը Պատվիրատուին և Կատարողին ծանուցում է Պայմանագրի 6.3 կետով սահմանված կարգով:

2.3. Դրամաշնորհի գումարը կարող է կազմել Դրամաշնորհային պայմանագրով Պատվիրատուի կողմից Կատարողին վճարման ենթակա ամբողջ գումարը կամ դրա մի մասը:

2.4. Պատվիրատուն և Կատարողը հավաստում են, որ Էսքրոու գումարը և Պայմանագրի 4.1.ե կետում նշված Ծառայությունների գումարը և Փաստաթղթերի ստուգման վճարը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անօրինական գործունեության, այդ թվում՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման արդյունք չեն հանդիսանում և Էսքրոու գումարը չի օգտագործվելու այդ և այլ հանցավոր նպատակների համար:

2.5. Էսքրոու գումարը Էսքրոու հաշվին մուտքագրելու պահից Բանկը պարտավորվում է պահպանել այն և բաշխել միայն սույն Պայմանագրով սահմանված կարգով, պայմաններով և ժամկետներում:

2.6. Էսքրոու հաշվով սույն Պայմանագրով նշվածից բացի այլ բանկային գործառնություններ չեն իրականացվում, եթե այլ բան չի պահանջվում ՀՀ օրենսդրությամբ:

2.7. Էսքրոու հաշիվը կփակվի զրոյական մնացորդ ունենալու, ինչպես նաև սույն Պայմանագրի լուծման դեպքում:

2.8. Էսքրոու հաշվում առկա միջոցները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց, բացառությամբ ՀՀ օրենսդրության իմպերատիվ նորմերով սահմանված դեպքերի:

3. Էսքրոու հաշիվ

3.1. Էսքրոու հաշվի վրա տարածվում են Բանկի՝ էսքրոու հաշվով գործարքների վերաբերյալ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված հիմնական պայմանները:

3.1.1. Սույն Պայմանագրի 4.1.4 կետում նշված Ծառայությունների գումարը և Փաստաթղթերի ստուգման վճարը որևէ դեպքում Բանկի կողմից ենթակա չեն հետ վերադարձման այն վճարող Կողմին, եթե այլ բան համաձայնեցված չէ Կողմերի միջև կամ սահմանված չէ 22 օրենսդրությամբ:

3.1.2. Էսքրոու հաշվի մնացորդի նկատմամբ տոկոսներ չեն հաշվարկվում:

4. Վճարում Էսքրոու հաշվից

4.1. Էսքրոու գումարը տնօրինվում է ստորև սահմանված կարգով՝

4.1.1. Էսքրոու գումարը վճարվում է Կատարողին անկանխիկ՝ փոխանցվելով վերջինի 1570029136951300 հաշվեհամարին, եթե սույն Պայմանագրի 2.2 կետով սահմանված կարգով Դրամաշնորհի գումարը Էսքրոու հաշվին մուտք լինելու պահից մինչև 23 դեկտեմբերի 2027թ.-ը ներառյալ Պատվիրատուն Բանկին ներկայացնում է Դրամաշնորհային պայմանագրով սահմանված միջոցառումները ընդունված լինելու վերաբերյալ Բանկին ուղղված գրություն (այսուհետ՝ «Փաստաթուղթ»), ընդ որում գումարը վճարվում է Փաստաթղթի բնօրինակը Բանկ ներկայացնելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: Բանկը Փաստաթուղթը Պայմանագրով սահմանված ժամկետում ստանալուց հետո իրականացնում է Փաստաթղթի ստուգում և դրա համապատասխանության դեպքում կատարում է Էսքրոու գումարի վճարումը սույն կետով սահմանված կարգով:

4.1.2. Էսքրոու գումարը վերադարձվում է Պատվիրատուին՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցելով թիվ 9000055701 15 ցանձապետական հաշվին, եթե մինչև 23 դեկտեմբերի 2027թ.-ը ներառյալ.

4.1.2.1. Պատվիրատուն Բանկին ներկայացնում է Դրամաշնորհային պայմանագրով սահմանված միջոցառումները կատարված չլինելու և Էսքրոու գումարի հետ փոխանցման վերաբերյալ Բանկին ուղղված գրություն, կամ եթե

4.1.2.2. Փաստաթուղթը սույն կետում սահմանված ժամկետում Բանկ չի ներկայացվել:

4.1.3. Սույնով Կողմերը համաձայնում են, որ Բանկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրի ներքո ներկայացված Փաստաթղթ/եր/ի և դրանց բովանդակության, իսկության, վավերականության, համապատասխանության համար:

4.1.4. Կատարողի կողմից Բանկին ենթակա է վճարման **50,000.00 (հիսուն հազար) ՀՀ դրամ** գումար՝ որպես սույն Պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների դիմաց վճար (այսուհետ՝ «Ծառայությունների գումար»):

Ի լրումն Կատարողի կողմից Բանկին ենթակա է վճարման **10,000.00 (տասը հազար) ՀՀ դրամ** որպես սույն Պայմանագրի 4.1.1 կետով սահմանված Փաստաթղթերի ստուգման դիմաց վճար (այսուհետ՝ «Փաստաթղթերի ստուգման վճար»): Ծառայությունների գումարը Կատարողը պարտավորվում է վճարել Բանկին՝ սույն Պայմանագիրը ստորագրելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Փաստաթղթերի ստուգման վճարը՝ Բանկին սույն Պայմանագրի 4.1.1կետով սահմանված Փաստաթղթերը ներկայացվելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում: Ծառայությունների գումարը և Փաստաթղթերի ստուգման վճարը Բանկի կողմից կարող են անակցեպտ կերպով գանձվել Կատարողի՝ Բանկում գործող ընթացիկ հաշիվ(ներ)ից: Ծառայությունների գումարը և Փաստաթղթերի ստուգման վճարը չեն ներառում սույն Պայմանագրի փաստացի կատարման նպատակով Բանկի կողմից մատուցվող այլ ծառայությունների դիմաց Բանկում գործող սակագներով սահմանված վճարման ենթակա այլ գումարները, որոնք ենթակա են վճարման Կատարողի կողմից:

4.1.5. Սույն Պայմանագրի Կողմերի միջև տարաձայնությունների արդյունքում Պատվիրատուի և Կատարողի կողմից Էսքրոու գումարի կամ Էսքրոու Հաշվի տնօրինման վերաբերյալ հակասող հանձնարարություններ ստանալու և/կամ սույն Պայմանագրի ներքո Պատվիրատուի և/կամ Կատարողի կողմից ներկայացված որևէ փաստաթղթի շինականության կապակցությամբ հիմնավոր կասկածներ ունենալու դեպքում կամ Պայմանագրի ներքո ձեռնարկվելիք գործողությունների առնչությամբ կասկածների առկայության դեպքում Բանկը իրավունք ունի պահել Էսքրոու գումարը և չկատարել դրա հետ կապված որևէ գործողություն մինչև Էսքրոու գումարը տնօրինելու վերաբերյալ իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճռի/ որոշման կամ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (այսուհետ՝ «ԴԱՀԿ») համապատասխան ակտի կամ Էսքրոու գումարը տնօրինելու վերաբերյալ Պատվիրատուի և Կատարողի համատեղ հանձնարարության ստացումը:

4.1.6. Սույն Պայմանագրի 4.1.5 կետում սահմանված դեպքերում, Բանկը նախապես ծանուցում է Կողմերին առկա հանգամանքների մասին, իսկ Էսքրոու հաշվին առկա գումարը բաշխում է համաձայն ստացված համապատասխան դատական ակտի/ վճռի/որոշման/հանձնարարության:

4.1.7. Էսքրոու հաշվի նկատմամբ սահմանափակումներ կարող են կիրառվել նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և նախատեսված դեպքերում:

5. Կողմերի պատասխանատվությունը.

5.1. Պայմանագրով Պատվիրատուն և Կատարողը համապարտ պատասխանատվություն են կրում Պայմանագրի կատարման կապակցությամբ Բանկին ներկայացված պահանջների հետևանքով Բանկի կրած իրական վնաս/ներ/ի/ կորուստ/ներ/ի համար:

5.2. Բանկը պատասխանատվություն չի կրում՝

5.2.1. Դրամաշնորհային պայմանագրով Պատվիրատուի և Կատարողի ստանձնած որևէ պարտավորության կատարման համար, ներառյալ Դրամաշնորհային պայմանագրով սահմանված՝ էսքրոու գումարը գերազանցող գումարների վճարման համար,

5.2.2. Դրամաշնորհային պայմանագրով Պատվիրատուի և Կատարողի կողմից միմյանց և/կամ Դրամաշնորհային պայմանագրի Կողմ հանդիսացող կամ չհանդիսացող երրորդ անձանց նկատմամբ, ինչպես նաև Պատվիրատուի և/կամ Կատարողի ստանձնած այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

5.2.3. Պայմանագրով նախատեսված գործողությունների կամ բացթողումների համար, բացառությամբ Բանկի կողմից Պայմանագրի դրույթների՝ դիտավորությամբ խախտման դեպքերի, որը կհիմնավորվի և կհաստատվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. *Եզրափակիչ դրույթներ*

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից: Պայմանագիրը կհամարվի լուծված, եթե Պայմանագրի 2.2 կետում նշված ժամկետում էսքրոու գումարը չի մուտքագրվել էսքրոու հաշվին:

6.2. Պայմանագրի դրույթները կարող են փոփոխվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ՝ մեկ գրավոր փաստաթուղթ կազմելու միջոցով:

6.3. Պայմանագրի ներքո Կողմերից յուրաքանչյուրին ուղարկվող ցանկացած ծանուցում, նամակ, պահանջ, հանձնարարություն կամ այլ հաղորդում պետք է մյուս կողմին/ կողմի լիազոր ներկայացուցչին հանձնվի առձեռն կամ ուղարկվի գրավոր պատվիրված նամակով՝ ստացող կողմի՝ ուղարկող կողմին հայտնի վերջին հասցեով կամ Պայմանագրի 7-րդ կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեով, եթե այլ պարտադիր պայման նախատեսված չէ հաղորդակցման մասին Բանկի և համապատասխան Կողմի գրավոր համաձայնությամբ:

6.4. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են դատական կարգով՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից, եթե այլ բան սահմանված չէ Կողմերի համաձայնությամբ և/կամ ՀՀ օրենսդրության իմպերատիվ նորմերի պահանջներով:

6.5. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 3 /երեք/ իրավահավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7. *Կողմերի հասցեները և ստորագրությունները*

ԲԱՆԿ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«ՊՈՊՈՒՏԻ, ԷՅ ԷՄ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վ. Սարգսյան 2	ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց փողոց 21/3 շենք, բն. 1
ՀՎՀՀ՝ 02502212	ՖՆ գործառնական վարչություն	
Էլ.փոստ՝ tradefinance@ameriabank.am	2/2 90001039444	ՀՎՀՀ՝ 01061832
Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝	ՀՎՀՀ 02565518	Էլ. փոստ՝ astghik@gmail.com
Սուրեն Բալայան	Էլ. փոստ՝ info@hti.am, grant@hti.am	Գործադիր մասնմի ղեկավար՝
	Գլխավոր բուհուղար՝	Աստղիկ Մաիլյան
	Դավիթ Գասպարյան	
Կ.Տ.	Կ.Տ.	Կ.Տ.